



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՐԱՄԱՆ թիվ 01-03/53

ք.Երևան

25 փետրվարի 2020 թ.

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԵՂԻ
ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության (փոփոխություններով) 54-րդ կետի 12-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀԱՊՀ Գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 4-ի նիստի թիվ 46 որոշմամբ հաստատված «ՀԱՊՀ ինստիտուտի տնօրենի ընտրության կարգ»-ի 14-րդ կետի 2-րդ պարբերության դրույթները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հրապարակել ՀԱՊՀ Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի տեղակալման համար դիմած հետևյալ թեկնածուներին.

ՇԱՄԱՄՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՌՈԼԱՆԴԻ՝

- ծնված 1985թ., տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԱՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանի տեղակալ, Ջերմաէներգետիկայի և շրջակա միջավայրի պաշտպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար:
- 2007թ. ավարտել է ՀՊՃՀ Էներգետիկական ֆակուլտետը «Ջերմային էլեկտրական կայաններ» մասնագիտությամբ՝ գերազանցության դիպլոմով.
- Համալսարանում աշխատում է 2008 թվականից, որպես՝ «Ջերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պաշտպանություն» ամբիոնի գիտաշխատող, դասախոս, ասիստենտ, դոցենտ.
- 2016 թվականից Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2019թ. սեպտեմբերից համատեղությամբ «Ջերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պաշտպանություն» ամբիոնի վարիչի պաշտոնակատար.
- Հրատարակել է 16 գիտական և 1 ուսումնամեթոդական աշխատանքներ.
- Պարգևատրվել է լավագույն զեկուցման համար 1-ին կարգի դիպլոմով և ՀԱՊՀ Շնորհակալագրով:

2. Երվանդ Ռոլանդի Շամամյանի թեկնածության քննարկումն իրականացնել Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում (նիստի նախագահ՝ պրոռեկտոր Մ.Բաղդասարյան)՝ ս.թ. մարտի 09-ին ժամը 14:30-ին՝ ՀԱՊՀ 2-րդ մասնաշենքի թիվ 2255 սենյակում:

ՌԵԿՏՈՐ

Ռ. ՄԱՐՈՒԻՒՅԱՆ